ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 22 >> մարտ 2016թ
ք. Եղեգնաձոր

N 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2016 թվականի մարտի 14-ի N166-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 69-2.1-1, 69-2.2-2, 69-2.2-13, 69-2.3-(14-15) անձնագրերի 10-րդ կետի «բ» ենթակետի՝

ա. «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» բառերը փոխարինել «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» բառերով.

բ. «Աշխատանքի վարձատրության մասին» բառերը հանել.

2) ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-2.3-16) անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետի «Քաղաքացիական

ծառայողների վարձատրության մասին» բառերը փոխարինել «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» բառերով.

3) ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջին կարգի մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-4.1-16) անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետի «Աշխատանքի վարձատրության մասին» բառերը հանել.

4) գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-2.1-5) անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետի՝

ա. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» բառերը փոխարինել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» բառերով.

բ. «Բուսական աշխարհի մասին» բառերից հետո լրացնել «,«Բուսասանիտարիայի մասին»» բառերով.

5) գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-2.2-4) անձնագրի 11-րդ կետի «բ» ենթակետի՝

ա. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» բառերը փոխարինել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» բառերով.

բ. ««Բուսական աշխարհի մասին,»» բառերից հետո լրացնել «, «Բուսասանիտարիայի մասին»» բառերով.

6) գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-2.3-9) անձնագրի 11-րդ կետի <<բ>> ենթակետի «Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին» բառերը փոխարինել «Բուսասանիտարիայի մասին» բառերով.

7) առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-2.1-6) անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետի «Սոցիալական ապահովության քարտերի մասին» բառերը փոխարինել «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» բառերով և «ՀՀ կառավարության 2000 թ հուլիսի 3-ի «ՀՀ-ում աղքատության ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության նշանակման և վճարման կարգի մասին» N 350 որոշման» բառերը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի ,Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 145-Ն որոշման» բառերով.

8) առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-3.2-9) անձնագրի

11-րդ կետի «բ» ենթակետի «Սոցիալական ապահովության քարտերի մասին» բառերը փոխարինել «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» բառերով և «ՀՀ կառավարության 2000 թ հուլիսի 3-ի «ՀՀ-ում աղքատության ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության նշանակման և վճարման կարգի մասին» N 350 որոշման» բառերը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 145-Ն որոշման» բառերով.

9) առողջապահության և սոցիալական ապահովության վարչության քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 69-2.2-5, 69-3.2-8) անձնագրերի 11-րդ կետի «բ» ենթակետի «Սոցիալական ապահովության քարտերի մասին» բառերը փոխարինել «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» բառերով.

10) զորահավաքային նախապատրաստության բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 69-2.2-22, 69-3.1-13) անձնագրերի 10-րդ կետի 2-րդ ենթակետից հանել ««Պաշտպանության մասին,»»բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ